

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ավիացիոն բժշկության հարցերով փորձագետի կողմից 2023թ հուլիսի 11-ից մինչև 2024թ. հունվարի 9-ը եղած ամփոփիչ փուլի ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Կիրառվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 18.01.23թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 301-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1-Ա հրամանով հաստատված ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների) ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգը, իմ կողմից իրականացվել է «Ավիաբուժ» բժշկական կենտրոնի պատահական աուդիտ, Կոմիտեի իրավաբանական վարչության հետ քննարկումներ են իրականացվել նոր փոփոխությունների առաջարկի վերաբերյալ:
2. Թարմացվել է ավիացիոն բժշկության փորձագետի ձեռնարկը, նախապատրաստվել է Կոմիտեի նախագահի կողմից հաստատման: Ձեռնարկի առաջին թողարկումը 2015թ. էր իրականացվել՝ ներառելով 301-Ն և 302-Ն հրամաններով սահմանված Կարգերի մանրամասները: 2022թ. և 2023թ. ավիացիոն մասնագետների բժշկական գննման և սերտիֆիկատների թողարկման և ավիացիոն բժշկական կենտրոնի և մասնագետների հավաստագրման կարգի փոփոխությունների հետ նաև ձեռնարկի փոփոխության անհրաժեշտություն է առաջացել:
3. Աշխատանքներ են իրականացվել ավիացիոն բժշկության փորձագետների հետ, իրականացվել է երկու սեմինար՝ 2023թ. նոյեմբերին «ուռուցքային հիվանդություններով հայցորդի գնահատումը ավիացիոն բժշկության տեսանկյունից» և 2023թ. դեկտեմբերին՝ «Ավիացիոն բժշկության փորձագետների հաշվետվական ձևերի ստուգման արդյունքների քննարկում» թեմաներով, 3-ական ժամ տևողությամբ: Մասնակցել են «Ավիաբուժ» բժշկական կենտրոնի տնօրենը, Կոմիտեի կողմից հավաստագրված երեք ԱԲՓները: Գործող ԱԲՓներին տրամադրվել է շարունակական մասնագիտական աջակցություն:
4. Իրականացվել է Կոմիտեի կողմից հավաստագրված «Ավիաբուժ» բժշկական կենտրոնի աշխատանքների ընթացիկ հսկողություն՝ ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումներ: 2023թ. դեկտեմբերի 11-ին ԱԲՓների հաշվետվական ձևերի վերլուծության վերաբերյալ զեկույցն


ուղարկվել է Կոմիտեի նախագահի հաստատմանը՝ Կոմիտեի «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով:

5. Ընդունվել են ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումներ՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքեր են դիտվել, իրականացվել է դեպքերի կրկնակի վարում: Թողարկվել են սահմանափակումների կիրառությամբ սերտիֆիկատներ, մեկ դեպքում հանվել է նախկինում կիրառված սահմանափակումը:
6. Ապահովվել է Կոմիտեի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցությունը, Կոմիտեի աշխատողների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի, ԻԿԱՕ-ի, ԵԱՍԱ-ի) կողմից տրամադրված լրատվության մեկնաբանություններ են տրամադրվել:
7. Իմ կողմից լրացվել է համատեղ արտաքին գնահատման հարցաթերթիկի ավիացիոն բժշկության բաղադրիչի հարցերի պատասխանները, առանձին հղումների նշումով և ապացույցների նախապատրաստումով:
8. Վերացվել են ԵԱՍԱ աուդիտի ընթացքում վերհանված թերությունը՝ սերտիֆիկատի մակնշման փոփոխության ընդունմամբ՝ 2022թ.:

Արմինե Դանիելյան,
բ.գ.թ.,
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
ավիացիոն բժշկության հարցերով փորձագետ
09.01.2024թ.


.....
(ստորագրություն)

Արմինե Դանիելյանի կողմից
կատարած աշխատանքները գնահատում եմ՝


.....
(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ
09.01.2024թ.

 **Միհրան Խաչատրյան**